ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ. ՈՐՔԱՆ ԵՆՔ ՄԵՆՔ ՀԵՌՈՒ ԵՎՐՈՊԱՅԻՑ

19 Սայաթ Նովա, Երեւան
Հեռ.՝ +3741 58-26-38, Ֆաքս՝ +3741 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Իրականում ու՞ր

Եվրոպա ասելով, թերևս, կարելի է պատկերացնել եվրոպական արժեքային համակարգի (հիմքում հռոմեական իրավունքը, հունական մշակույթը, քրսիտոնեական բարոյականությունն ու բողոքական էթիկան) և մարդու ու սեփականության իրավունքների իրական պաշտպանության հիմնարար սկզբունքների վրա խարսխված համակարգ, որը ժամանակի ընթացքում ապացուցել է իր կենսունակությունն ու հասել էական նվաճումների:

Ելման կետը

Մասնավորեցման գործընթացի մեկնարկին հաջորդող ժամանակահատվածում Հայաստանը նախ մտավ կրիմինալ կապիտալիզմի փուլը, որը ժամանակի ընթացքում վերաճեց կլանային կապիտալիզմի: Ներկայում կարելի է նաև դիտարկել դեպի չինովնիկական կապիտալիզմի աստիճանական անցման միտում:

Հասարակական կյանքը խարսխված է ոչ թե հասարակական, այլ գերազանցապես անձնական արժեքների վրա: Շատ դեպերում գերիշխում են խորհրդային տարիներից ժառանգություն մնացած մոտեցումները պետության ընկալման վերաբերյալ: Իշխանության ճյուղերի դե-ֆակտո տարանջատում չկա, առկա է սեփականության լեգիտիմիզացիայի խնդիր: Դատական համակարգը դեռևս չի հասել այն «անդառնալի» կետին, որ կարողանա արդյունավետ զարգանալ:

Քաղաքական դաշտ, դասական իմաստով, գոյություն չունի, յուրաքանչյուր հերթական ընտրություններից հետո ընտրությունների ինստիտուտը հասարակական գիտակցության մեջ էլ ավելի է հեղինակազրկվում: Կուսակցություններն առավելապես «լիդերի» շուրջ հավաքված մարդկանց խումբ են հիշեցնում, քան քաղաքական գաղափարներ կրող ուժեր: Շատ կուսակցության առաջին դեմքերը չեն էլ պատկերացնում, թե ո՞ր դաշտում են գործում: Երբեմն մեկ ուժ ներկայացնողներն արտահայտում են հակադիր տեսակետներ: Հասարակությանն էլ առանձնապես չի հետաքրքրում, թե քաղաքական ո՞ր սպեկտորում են դրանք գտնվում: Ընդիմադիրների պայքարը ծավալվում է զուտ «տնտեսական ռեսուրսների աղբյուրներին» տիրանալու շուրջ:

Հայաստանն այսօր ունի նաև ներքին ինտեգրացիայի մեծ խնդիր: Գոյություն ունեցող կարծիքները Երևանում և մարզերում կարող են տրամագծորեն տարբերվել: Հասարակական կարծիքը իշխանության գործողությունների ուղղորդիչ կամ գոնե որոշակի ազդակ չի հանդիսանում: Հասարակական կազմակերպությունները հետզհետե նմանվում են ակումբների ու ավելի քիչ են սկսում արտահայտել հասարակության կարծիքը:

Տպագիր մամուլն ավելի շուտ դարձել է կլանների միջև ուղերձների փոխանակման միջոց, իսկ հանրապետության ողջ տարածքում սփռվող 3-4 հեռուստաընկերությունները որակի կամ բազմակարծության ապահովման տեսանկյունից որևէ քննադատության չեն դիմանում:

Թեև այսօր հասարակությունն ամբողջովին դուրս է մղված պետական կառավարման գործընթացից, սակայն, նկատվող միջկլանային մրցակցության հետևանքով կլանները կամաց-կամաց հասարակության որոշակի շերտերի սկսում են ներգրավել դրանցում:

Գործընթացը

Եթե «որքանո՞վ ենք մոտ Եվրոպային» հարցը դիտարկենք օրենսդրական դաշտի տեսանկյունից, ապա կարող ենք ասել, որ գոյություն ունեցող օրենքներով, միգուցե, ինչ-որ չափով մոտեցել ենք, բայց դրանց կիրառման տեսանկյունից՝ շատ և շատ հեռու ենք: Մենք ունենք օրենքների խախտման անթույլատրելիության ընտրովի մոտեցում. սա կարելի է խախտել, սա չի կարելի կամ այս մեկը կարող է խախտել, մեկ ուրիշը չի կարող: Սա մի ճանապարհ է, որ տանում է կործանման:

Ցայսօր Եվրոմիության անդամ են դարձել այն երկրները, որոնք եղել են աշխարհագաղափարական-պատմական Եվրոպային մաս: Հայաստանն այդպիսին չէ: Ի՞նչն է մեզ ստիպում ընտրել եվրոպական ուղղությունը: Միգուցե կայացված քաղաքական որոշումն ամենևին էլ հասարակության պահանջը չէ՞: Հարկավոր է լուրջ հասարակական քննարկում ծավալել, հասկանալ հասարակական տրամադրությունները, հասկանալ, թե ինչպե՞ս է կարելի ազդել այդ տրամադրությունների վրա, կամ հարկ կա՞ արդյոք ընդհանրապես ազդել, թե՞ ոչ:

Կարելի է աշխատանքային խմբեր ձևավորել, փորձել ձևակերպել, թե ո՞րն է մեր արժեքային համակարգը, մեր մենթալիտետը, ի՞նչ դինամիկա են դրանք արձանագրել մինչև հիմա և ի՞նչ ուղով են զարգանում: Եթե ոչ Եվրոպա, ապա դեպի ու՞ր գնալ, եթե ոչ մի տեղ, ապա ինքնաբավ ինչպե՞ս:

Այս դեպքում կարևոր է գործընթացն ինքը, և ոչ թե նպատակի սահմանումը և հասնելը: Ինտեգրացիոն գործընթացն ինքնին շատ կարևոր է:

Եվրոմիությունն հայտարարել է իր «Նոր հարևաններ» հայեցակարգը: Եվրոպան քայլ է անում արևելք: Այժմ մենք նույնիսկ եթե շրջվենք, ապա՝ պիտի դիմադրենք:

Դեպի Եվրոպա ճանապարհը հասարակական պահանջարկի և նախաձեռնությունների ձևավորման ճանապարհն է: Սպասել, որ պետությունն իր նախաձեռնությամբ կարագացնի գործընթացը, անիմաստ է: Ամեն ինչ կսահմանափակվի հայտարարությունների դաշտում:

Եվրոպական կառույցներում աշխատող մեր պատվիրակությունների աշխատանքների անաչառ լուսաբանումը շատ կնպաստի գործընթացին: Հասարակությանը հարկավոր է հրամցնել՝ «ի՞նչ է Եվրոպան»: Ինչ-որ բան կոծկելը հղի է հետագա վտանգներով: Մեր հասարակությունը չգիտի ինչ է Եվրոպան կամ այդ ինչ եվրոպական ուղղություն ենք մենք ընտրել: Եվրոպան էլ իր բացերն ունի: Պիտի ամեն ինչ ներկայացվի: Եթե վաղօրոք ամեն ինչ չհրամցվի և գիտակցվի, ապա վաղվա որևէ կտրուկ որոշում, եթե նույնիսկ Եվրոպային անմիջականորեն մոտենալ նշանակի, կարող է շոկային հետևանքներ ունենալ:

Համառոտագիրը մշակված է ՄՋՄԿ սեպտեմբերի 27-ին «Ժողովրդավարական ինստիտուտների զարգացում. որքան ենք մենք հեռու Եվրոպայից» թեմայով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, մամուլի և միջազգային կառույցների ներկայացուցիչներ: